ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցման հնարների կիրառումը «Հնաբանություն» բաժնի «Թվական» թեման ուսումնասիրելիս

Կատարող՝ Մարիամ Հովսեփյան

Թիվ 23 միջնակարգ դպրոց,
հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

Գյումրի - 2022

Բովանդակություն

Ներածություն ……..3

Թվականի՝ որպես խոսքի մասի ուսուցումը……..……..5

Ուսուցման հնարների կիրառումը: Թվականի տեսակների ուսուցումը…….. ..12

Եզրակացություն…… 17

Հավելված……..….18

Գրականության ցանկ……..…23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում ուսումնասիրվող լեզվական նյութի բովանդակությունը, նրա ծավալն ու խորությունը որոշվում են լեզվաբանության ժամանակակից վիճակով: Լեզվի բաղադրամասերը՝ հնչյունը, բառը, քերականությունը, պարզ բացատրությամբ տրվում են դպրոցական ծրագրերում: Տեսական հիմքով, լեզվական երևույթների գիտական բացատրությամբ լեզվաբանությունն ու դպրոցական քերականությունը միմյանցից չեն տարբերվում: Նրանց տարբերությունը գլխավորապես անցնելիք նյութի ծավալի և խորության մեջ է:

Այս պարագայում արդեն կարևորվում են նյութի մատուցման ձևն ու դասավանդման մեթոդները: Հայտնի է, որ ավանդական մեթոդները պատմության մեջ քննություն են բռնել և շարունակաբար գործադրվել են դպրոցներում, մինչդեռ ժամանակակից մոտեցումները դեռ ճշգրտման, արդյունավետության տեսակետից քննարկման կարիք ունեն, որոնց ուղղությամբ ներկա աշխատանքը մի համեստ փորձ է լինելու:

Հետազոտության թեման արդիական է, քանի որ ձևաբանությունը համարվում է հայոց լեզվի ուսուցման հիմնասյուներից մեկը, և դրա արդյունավետ և հիմնավոր ուսուցման ձևերի և մեթոդների ուսումնասիրությունը և ընտրությունը կարևոր ենք համարում:

Ինչ վերաբերում է դասի ընթացքում դաստիարակչական բնույթի աշխատանքին, ապա յուրաքանչյուր դաս, ունենալով ուսումնական բնույթ, պարտադիր իր մեջ կրում է նաև դաստիարակչական արժեք: Մանավանդ որ հայերենի քերականությունը, լինելով ազգային լեզվամտածողության արտահայտությունը, իր մեջ կրում է ազգային հոգեբանության տարաբույթ արտահայտություններ, որոնց գիտակցումը և արժևորումը առավել քան կարևոր է այսօր:

Աշխատանքի նպատակը համարում ենք թվականի ուսուցման համար ժամանակակից մեթոդների ուսումնասիրությունը՝ քննելով դրանց արդյունավետության աստիճանը:

Մեր աշխատանքի առաջադիր խնդիրներն ենք համարում. թվականի՝ որպես խոսքի մասի, թվականի տեսակների, ուղղագրության ուսուցման ժամանակ արդյունավետ մեթոդների ընտրությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքի իրականացման համար նախատեսված հետազոտական մեթոդներին, ապա քանի որ մեթոդաբանությունը բխում է նպատակներից և խնդիրներից, ուստի նախընտրելի ենք համարում նախ նկարագրական, ապա համադրական և վերլուծական մեթոդների կիրառությունը: Այդ իսկ նպատակով վերցրել են յոթերորդ դասարանի համար նախատեսված երկու դասագիրք՝ Ֆ.Խլղաթյան, Լ.Խաչատրյան, Հայոց լեզու- 7, Երևան, 2006 և Հ. Բրասեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզվի դասագիրք 7-րդ դասարանի համար, Երևան, 2011:

ԳԼՈՒԽ 1. Թվականի՝ որպես խոսքի մասի ուսուցումը

Նախքան բուն թվականի դասավանդմանն անդրադառնալը նախ նշենք լեզվական՝ տվյալ պարագայում ձևաբանական գիտելիքների ուսուցման ծրագրային բաշխվածությանն ընդհանրապես: Այսպես, 7-9-րդ դասարանների հայոց լեզվի դասընթացը ներառում է երկու մեծ բաժին՝ լեզվական գիտելիքներ և կապակցված խոսք:

Լեզվական գիտելիքները վերաբերում են ձևաբանությանն ու շարահյուսությանը, մեջբերվող խոսքին, կետադրությանը, իսկ կապակցված խոսքը՝ տեքստին, խոսքի ոճերին, գործնական գրություններին:

Նշենք, որ յուրաքանչյուր դասագրքի առաջին բաժինը նախորդ դասարանում անցածի կրկնությունն է, որպեսզի նյութը հնարավորինս լիարժեքորեն ընկալվի:

Ինչ վերաբերում է ձևաբանությանը, ապա այն տեղաբաշխված է երկու դասագրքերում. 7-րդ դասարանը ընդգրկում է նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, իսկ 8-րդ դասարանը ընդգրկում է քերականական և վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ կապ, շաղկապ, ձայնարկություն և վերաբերական: Ընդ որում, այս նյութի նմանատիպ բաշխումն ունի իր տրամաբանական բացատրությունը: Կապերն ու շաղկապները, լինելով քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր, նախադասության մեջ կատարում են ընդամենը կապակցման միջոցի դեր, իսկ ձայնարկություններն ու վերաբերականները եղանակավորում են խոսքը՝ զգացական վերաբերմունք արտահայտելով, ուստի այս խոսքի մասերի ուսուցումը սերտորեն

շաղկապվում է շարահյուսական նյութի ուսուցման հետ, որին անդրադառնալու են հաջորդ դասարաններում:

Նշենք, որ ըստ դպրոցական ծրագրի՝ 7-րդ դասարանի հայոց լեզվի ուսուցման համար նախատեսվում է 102 ժամ /ընդ որում, 8-րդ և 9-րդ դասարաններում ժամաքանակը նվազում է՝ ընդամենը 68-ական ժամ է տրամադրում/:

Ըստ թեմաների՝ ժամաքանակի բաշխումը կատարվել է հետևյալ կերպ՝ թվական ուսուցմանը տրամադրելով 5 ժամ:

Հայոց լեզուն դպրոցում դասավանդվող ամենակարևոր առարկաներից է: Այն աշակերտի մայրենի լեզուն է, որը երեխան սովորում է նախ տանը՝ ընտանիքում, կատարելագործում դպրոցում:

Լեզվական գիտելիքներ հաղորդելիս կարևորվում են և՛ թվականի՝ իբրև խոսքի մասի ընկալումը, և՛ թվականների կազմության, տեսակների, դրանց վերաբերող ուղղագրական իրողությունների լիարժեք իմացությունը: Այսինքն՝ աշակերտը պետք է ամբողջական պատկերացում ունենա լեզվական այն իրողության մասին, որը ներկայացվում է: Սա կարևորվում է մանավանդ հիմնական դպրոցից սկսած, երբ աշակերտը տարրական գիտելիները ստացած անցնում է արդեն գիտելիքի հիմնական պաշարի յուրացմանը:

Անդրադառնալով թվականին՝ նշենք, որ այդ խոսքի մասի վերաբերյալ երեխաներն արդեն որոշակի գիտելիքներ ստացել են դեռևս տարրական դասարաններում, ինչպես նաև գոյականի քերականական կարգեր ուսումնասիրելիս անդրադրձել են նաև թվի քերականական կարգին, այսինքն՝ այս պարագայում ուսուցիչը կարող է և պետք է նկատի ունենա նշված հանգամանքը թեման ներկայացնելիս: Ուսուցման այս իրողությունը հուշում է նաև դասագիրքը, այստեղ թվականի արտահայտած իմաստը համեմատվում է այլ խոսքի մասերի արտահայտած թվային իրողությունների հետ. «Թվային իմաստ պարունակում են նաև այլ խոսքի մասեր, ինչպես՝ գոյականը՝ տասնամյակ, հիսնամյակ, ածականը՝ եռամսյա, տասնօրյա, երկկողմ, թե՛ ածականը, թե՛ մակբայը եռակի, հնգակի,

եռապատիկ, տասնապատիկ, հարյուրապատիկ և այլն, բայց ի տարբերություն թվականի, սրանք չեն կարող գրվել թվերով, միայն տառերով»[1]:

Այսպես, թվականի ուսումնասիրությունն սկսվում է նախ դրա խոսքիմասային իմաստի և ունեցած դերի մեկնաբանումից: Օրինակ՝ կարելի է բերել փոքրիկ տեքստ՝ հագեցած թվականի տարբեր տեսակների գործածությամբ, ընթերցել այն, առանձնացնել թվականները, դասդասել՝ նշելով, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ է արտահայտում: Ի դեպ, ցանկալի է, որ նախ այնպիսի օրինակ բերվի, որտեղ կան միայն բացարձակ քանակական և դասական թվականներ, հետո, երբ արդեն անդրադառնանք թվականների տեսակներին, նոր ներկայացվի թվականի մյուս տեսակներով էլ հագեցած տեքստեր՝ նյութի յուրացումն առավել արդյունավետ դարձնելու և աշակերտների մոտ ենթադրելի շփոթը կանխելու նպատակով:

Օրինակ՝ *Էջմիածնի Մայր տաճարն ունի <u>հազար յոթ հարյուր</u> տարվա պատմություն: Այն կառուցվել է <u>չորրորդ</u> դարում <u>երեք հարյուր մեկ</u> թվականին: Տաճարը աշխարհի այն հազվագյուտ կառույցներից է, որտեղ շուրջ <u>տասնութ</u> դար կյանքը շարունակվել է առանց ընդմիջման: <u>Չորս հարյուր հիսուներեք</u> թվականին Մայր աթոռը Էջմիածնից տեղափոխում են Դվին, ապա <u>ինը հարյուր ութսունութ</u> թվին կրկին հաստատում Էջմիածնում: <u>Հինգերորդ</u> դարի սկզբին այստեղ բացվել է առաջին դպրոցը*[2]:

Ընդ որում, տեքստը կարելի է և՛ ընթերցել, և՛ նախապես պատրաստված պաստառի ձևով ներկայացնել, և՛ ցուցադրել պրոեկտորի միջոցով, եթե իհարկե, վերջին տարբերակի հնարավորությունը դպրոցն ունի:

Նյութը ներկայցանելուց հետո անհրաժեշտ է աշակերտների հետ առանձնացնել թվականները: Որպեսզի երեխաները հեշտությամբ կողմնորոշվեն, կարելի է առաջարկել առանձնացնել այն բառերը, որոնք հնարավոր է թվերով ևս արտահայտել, ինչպես *հազար յոթ հարյուր - 1700, չորրորդ – 4 –րդ կամ IV երեք հարյուր մեկ - 301, հինգերորդ 5-րդ կամ V* և այլն: Այս պարագայում հատուկ պետք է նշել թվականների իմաստային տարբերությունները՝ հազար յոթ հարյուր և չորրորդ՝ ընդգծելով իմաստային յուրահատկությունները. մեկ դեպքում՝ քանակ, մյուս

[1] Տե՛ս Հ. Բրասեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզվի դասագիրք 7-րդ դասարանի համար, Երևան, 2011, էջ 65:

[2] Բնագիրը վերցված է Ռ. Նազարյան և ուրիշներ, Թելադրության նյութերի ժողովածու, IV X դասարանների համար, Երևան, 2000, էջ 194:

դեպքում՝ թվային կարգ: Ընդ որում, կարևոր է, որ ուսուցիչն անընդհատ ուշադրության կենտրոնում պահի թվականների ուղղագրությունը և հենց սկզբից աշակերտներ ուշադրությունը հրավիրի այդ խնդրի վրա, օրինակ՝ գրվեցին գրատախտակին առանձնացված թվականները, անմիջապես պետք է ասել ուղղագրական իրադությունները (ասենք՝ տասնմեկից ինն-ունինը թվականները գրվում են միասին, մնացյալը՝ առանձին)՝ անհրաժեշտաբար կրկնելով դրանք:

Դրանից հետո կարելի է առաջարկել, որ աշակերտները բերեն այլ օրինակներ ևս: Ընդ որում, ցանկալի է՝ բառակապակցությունների տեսքով, օրինակ, *երեք ծաղիկ, քսանչորս մարզիկ, հարյուր հին օր* և այլն: Այս ամենից հետո կարելի է գալ ընդհանուր եզրակացության՝ ընդգելծով թվականի արտահայտած խոսքամասային իմաստն ու նշանակությունը, այն է՝ առարկաների թիվ, քանակ կամ հերթական կարգ:

Թվականի ուսուցումը հետապնդում է գործնական նպատակներ. սովորողները պետք է կարողանան տարբերակել թվականների տեսակները, դրանց կազմության և գրության սկզբունքները, իսկ ինչ վերաբերում է դրանց ուղղագրությանը, ապա դրան լավագույնս տիրապետելու համար աշակերտները պետք է սովորեն թվականների տեսակներն ու կազմությունը: Այսպես, դասագրքում տրվում է թվականների գրության վերաբերյալ գծապատկեր, որը կօգնի հիշել այնքան շատ սխալ գրվող ինն-ինը և տասը -տասն թվականների ուղղագրությունը[3]:

Ուսուցման նոր մեթոդները պահանջում են թեստային առաջադրանքների ներդրում, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր թեմայի վերջում կարելի է առաջադրել թեստային ստուգում, որոնք խիստ կարևոր են ինչպես թեմայի ամփոփման, այնպես էլ տրված նյութի յուրացման աստիճանը ստուգելու համար: Մեր աշխատանքի Հավելված բաժնում առանձնացրել ենք թվականին վերաբերող մի շարք վարժություններ, որոնցով, կարծում ենք, կարելի է թեստեր կազմել:

Նշենք, որ ուսուցման հաջողությունը մեծապես կախված է ուսուցչից, նրա տեսական-մեթոդական պատրաստվածությունից, դասերի ճիշտ կազմակերպումից ու անցկացումից: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը հրաշալիորեն գիտենա դասարանը, ուր

[3] Տե՛ս Հ. Բրասեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզվի դասագիրք 7-րդ դասարանի համար, Երևան, 2011, էջ 52:

մտնելում է. դասին ներկայանա լավ նախապատրաստված, երբեք չապավինի իր փորձառությանը: Իհարկե, շատ լավ է փորձառու ուսուցիչ լինել, բայց շատ ավելի լավ կլինի մեկ անգամ ևս վերանայել դասագրքի համապատասխան բաժինը, կարդալ բոլոր հարցերն ու առաջադրանքները, նույնիսկ մտածել հնարավոր հարցերի մասին, որ կարող են տալ աշակերտները: Եվ որ ամենակարևորն է, ուսուցիչը պետք է հստակ իմանաք, թե ինչպիսի դաս է անցկացնելու: Դրա համար անչափ կարևոր է յուրաքանչյուր դասից առաջ կազմել դասի պլանը:

Դասի պլան

Դասի թեման – Թվական

Ժամաքանակը՝ 1 դասաժամ

Դասի նպատակները՝

1. Ներկայացնել թվականի՝ իբրև խոսքի մասի արտահայտած իմաստն ու քերականական առանձնահատկությունները:
2. Հարստացնել աշակերտների բառապաշարը, զարգացնել նրանց բանավոր և գրավոր խոսքը:

Դասի վերջնարդյունքները

Աշակերտը իմանա

Որ խոսքի մասն է կոչվում *թվական*:

Ինչ է ցույց տալիս թվականը:

Աշակերտը կարողանա

Անուն խոսքի մասերի շարքում տարբերակել թվականը:

Կապն առօրյա կյանքի հետ՝ գրավոր և բանավոր խոսքում թվականների տեղին և ճիշտ կիրառություն:

Դասավանդման մեթոդները՝ խմբային աշխատանք, ճանաչողական ու կիրառական վարժություններ, հարցուպատասխան:

Միջառարկայական, ներառարկայական կապ

Ուսումնական դիտողական պարագաներ: Գիրք, տետր, ապահովել պրոեկտոր:

Դասի ընթացքը.

1. Տնային առաջադրանքների քանակային, ապա որակային ստուգում:

2. Խթանման փուլում առաջարկել նախապես պատրաստված տեքստն ընթերցել՝ առանձնացնելով թիվ արտահայտող բառերը: Հետո բազմանիս մեթոդի կիրառմամբ տրված տեքստից առանձնացնել *թիվ արտահայտող* բառերը՝ աշակերտներին առաջարկելով գրել տրված թվականով նոր բառեր գրատախտակին՝ ուղղանկյունու մեջ:
3. *Իմաստի ընկալման փուլում* ներկայացնել թվական խոսքի մասի արտահայտած իմաստը՝ համապատասխան քերականական հատկանիշներով:

Ա. Ընդհանուր իմաստը' *քանակական հատկանիշ*

Բ. Ձևաբանական առանձնահատկությունը' *չթեքվող*

Գ. Տեսակները' *քանակական (բացարձակ, բաշխական, կոտորակային) և դասական*

Դ. Շարահյուսական դերը' *գոյականական, մասամբ և բայական անդամի լրացում:*

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև թվականների կազմությանը. Հայերենի բացարձակ թվականներից բոլոր միավորները, տասը և քսան տասնավորները, հարյուր-ը, հազար-ը, միլիոն-ը, միլիարդ-ը կազմությամբ պարզ թվականներ են, որովհետև կազմված են մեկ արմատից:

Երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն թվականներն ածանցավոր են, որովհետև կազմված են -սուն ածանցով:

Մյուս բոլոր թվականները բարդ են կամ բարդածանցավոր, որովհետև կազմված են մեկից ավելի արմատներից կամ արմատներից ու ածանցներից: Օրինակ' տասնութ, քսանչորս, հարյուր հինգ, հազար չորս հարյուր քսանմեկ և այլն:

Կարելի է քառաբաժան մեթոդի գործադրմամբ ներկայացնել թվականների կազմությունը: Գրախատակը բաժանել չորս մասի, տալ չորս թիվ ու առաջարկել դրանցով բառեր կազմել՝ համապատասխան սյունակներում գրելով:

4. Կշռադատման փուլում շատ կարևոր է անցած նյութի կրկնությունը և նորի ամրապնդում: Դասագրքում ևս առաջադրանքներն այնպես են տրված, որ անցածի կրկնությունն ապահովվի:
   Արտագրի՛ր բացարձակ թվականները գրելով տառերով: Հատուկ անունները գրի՛ր մեծատառով[4]:
5. Կատարել ուղղագրական աշխատանք:
6. Եռանիշ և քառանիշ թվեր նշանակող թվականների բաղադրիչները գրվում են առանձին /երկու հարյուր տասնմեկ/» և այլն: Այս նյութը կարելի է օգտագործել և բազմապիսի վարժություններ կազմել ու գործնական մեթոդներով հիմնովին սովորեցնել թվականների ուղղագրությունը, օրինակ, կիրառելով ԳՈՒՍ մեթոդը՝ վարժեցնելով գրության մեջ.

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորեցի
11, 23,76,89,98,99	տասնմեկ, քսաներեք, յոթանասունվեց, ութսունինը, իննսունութ, իննսունինը	11-99 թվականները կցական բարդություններ են, և բաղադրիչները կից են գրվում:

7. Տնային աշխատանքի հանձնարարում: **Առանձին սյունակներում դո՛ւրս գրիր բարդ և բարդածանցավոր թվականները և գրի՛ր բառերով:**

Աշակերտի ստացած գիտելիքները պետք է լինեն լիարժեք և կայուն, որի համար աշակերտները պետք է լավ ըմբռնեն նոր նյութը՝ հին ու նոր նյութերը համեմատելով և համադրելով որոշեն նմանություններն ու տարբերությունները, որոշ առաջադրանքներ ինքնուրույն կատարեն, հետևողականորեն կրկնեն անցածը: Անշուշտ, ինքնուրույն աշխատանքն աշակերտից պահանջում է մտքի լարում, ստեղծագործական ջանքեր: Ուսուցիչը թե՛ իր վերաբերմունքով, թե՛ համապատասխան առաջադրանքներով պետք է հնարավորինս շատ խթանի աշակերտների մտավոր ունակությունների ու ստեղծագործական երևակայության զարգացումը:

[4] Տե՛ս Հավելված, առաջադրանք 10:

ԳԼՈՒԽ 2. Թվականի տեսակների ուսուցումը

Թվականը ներկայացվում է չորս տեսակներով՝ *քանակական, դասական, կոտորակային, բաշխական*: Այն դասագրքում, որով մենք առաջնորդվում ենք[5] թվականները բաժանված են երկու խմբի՝ *քանակական և դասական*՝ յուրաքանչյուրն իր բնութագրմամբ և տեսակներով: Առարկաների քանակ ցույց տվող թվականները կոչվում են քանակական թվականներ: Քանակական թվականները լինում են *բացարձակ, կոտորակային և բաշխական*: Հընթացս նյութի մատուցմանը տրվում են նաև թվականների գրության վերաբերյալ գծապատկեր[6]:

Հայտնի է, որ բաշխական թվականները մերթ դիտվում են որպես քանակական թվականների ենթատեսակ, մերթ որպես ինքնուրույն տեսակ: Քանակի գաղափարը պետք է զուգորդել թվի հասկացության հետ, և այդ ժամանակ պարզ կդառնա, որ կոտորակային և բաշխական թվականները քանակականի ենթատեսակ դիտելը ճիշտ չէ և ներկայացնում է այդ տեսակների տարբերակման անհարմարություն: Կոտորակային թվականները, ինչպես հայտնի է, բաղադրյալ կապակցություններ են՝ կազմված երկու բաղադրիչից, որոնցից առաջինը քանակական թվական է, իսկ երկրորդը՝ դասական: Այս դեպքում կոտորակային թվականի կազմության մասին խոսել, երբ դասականների մասին գաղափար չի տրված, կարծում ենք, նպատակահարմար չէ: Այս խնդիրը լուծելու համար թվականները ներկայացվում են չորս տեսակներով՝ քանակական, դասական, բաշխական, կոտորակային:

Փաստերեն, այս պարագայում ուսուցման լուրջ խնդիրներ կարող են առաջացնել մանավանդ կոտորակային թվականները, որոնց բաղադրիչներից մեկը դասական թվական է: Մանավանդ որ դասագրքում յոթերորդ դասարանցու համար, կարծում ենք, փոքր-ինչ դժվարընկալելի են ներկայացված կոտորակային թվականները. «Կոտորակային կոչվում են այն թվականները, որոնք ցույց են տալիս միավորի մեկ կամ մի քանի հավասար մասերից կազմված թվեր: Կոտորակային թվականները հարադրական բարդություններ են, որոնց առաջին բաղադրիչը՝ համարիչը, բացարձակ թվական է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ հայտարարը, կազմվում է -րորդ, -

[5] Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, Երևան, 2011:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 52, 56:

երորդ կամ -երորդական ածանցներով, ահա թե ինչու կոտորակային թվականները գրվում են առանձին»[7]:

Այս պարագայում կարևորվում է ուսուցչի՝ նյութի մատուցման ձևը: Կարելի է կոտորակային թվականներն անցնելիս լսարան բերել նախապես պատրաստված թղթեր, որոնք կիսկսելով, առանձնացնելով կարելի է ցույց տալ ամբողջի և մասի հարաբերությունը:

Ինչ վերաբերում է դասական թվականներին, ապա սրանք իրենց իմաստով ու ձևով հատուկ և որոշակի ենթակարգ են կազմում: Անհրաժեշտ է անդրադառնալ դասական թվականների դրսևորման ձևերին ևս:

Այսպես, դասական թվականները գրվում են.

Ա. Արաբական թվանշաններով, այս դեպքում թվանշանից հետո դրվում է գծիկ, ապա՝ -րդ, որը կարդացվում է *-երորդ* կամ *-րորդ*, օրինակ՝ 5-րդ (հինգերորդ), 100-րդ (հարյուրերորդ), 12-րդ (տասներկուերորդ) և այլն:

Առաջին, բառը գրվում է 1-ին և կարդացվում է առաջին, բայց կարող է կարդացվել նաև *մեկին*, եթե գործածվում է որպես քանակական թվական: Օրինակ՝ Գոհարիկը սովորում է համալսարանի 1-ին (առաջիս) կուրսում: Հունվարի 1-ին (մեկին) աշակերտները շնորհավորեցին իրենց ուսուցիչների Նոր տարին:

Բ. Հայերեն այբուբենի տառերով՝ դրանց թվական արժեքի համապատասխան, օրինակ՝ Ա (1-ին), Բ (2-րդ), Ժ (10-րդ), ԺԳ (13-րդ), ԼԱ (31-րդ), Ճ (100-րդ) և այլն:

Գ. Հռոմեական թվանշաններով՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX, XXX և այլն:

Դ. Լրիվ բառերով՝ առաջին, վաթսուներորդ, հարյուրերորդ և այլն:

Այստեղ կարևոր է նրանց կազմության և դրա հետ կապված ուղղագրության, ինչպես նաև համառոտագրության ձևերի ուսուցումը:

Անջատ գրվող թվականների բաղադրիչները սովորաբար կցվում են, երբ նրանց որևէ վերջածանց է ավելանում (հինգհարյուրանոց, երեքհարյուրական):

Պետք է ուշադրություն հրավիրել նաև հետևյալի վրա, որ 1-ից մինչև 8 թվականը վերջում չունեն **ը** կամ **ն**: Ը-ն գրվում է միայն **ինը** և **տասը** բառերի վրա: Չկա **ութանասուն թվական**, ճիշտ է **ութսուն-ը**: Երրորդ, չորրորդ թվականները գրվում են կրկնակի **ր**-ով, քանի որ կազմվել են **եր**, **չոր** արմատներից և **րորդ** ածանցից:

[7] Տես Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, էջ 54:

Թվական խոսքի մասը հիմնավորապես պետք է սովորել ճանաչողական ու կիրառական վարժությունների, խմբային կամ զույգերով աշխատանքի միջոցով: Բազմաթիվ նպատակային վարժություններ կան դասագրքում և աշխատանքային տետրերում:

Յուրաքանչուր բարեխիղճ աշխատանք նախ սկսվում է համապատասխանաբար նախապատրաստումից: Ուսուցիչը պարտավոր է դասարան մտնելուց առաջ ծրագրել իր անելիքը՝ արտահայտելով այն դասի պլանում, որը ուղենշային, ոչ պարտադիր բնույթ ունի: Պայմանավորված ինչ-ինչ խնդիրներով ՝ ուսուցիչը կարող է փոխել նախապես ընտրած մեթոդը կամ դասի ընթացքը, սակայն, այնուամենայնիվ չափազանց կարևոր է դասարան մտնել նախապատրաստված: Ի դեպ, այն վերաբերում է ինչպես արհեստավարժ, այնպես էլ սկսնակ ուսուցիչներին, որոնք նախապատրաստման և ուղղորդման ավելի մեծ կարիք ունեն: Այսպես, բերենք դասի պլանի նմուշ օրինակ.

Ստորև ներկայացնում ենք «Թվականի տեսակները» թեմայի ուսուցման դասի օրինակ:

Դասի պլան

Դասի թեման՝ «Թվականի տեսակները»

Ժամաքանակը՝ 1 դասաժամ

Դասի նպատակները՝

1. Ամրապնդել թվականի վերաբերյալ գիտելիքները՝ գործնական առաջադրանքների միջոցով ձևավորելով համապատասխան հմտություններ:
2. Հարստացնել բառապաշարը, զարգացնել բանավոր և գրավոր խոսքը:

Դասի վերջնարդյունքները

Աշակերտը կիմանա թվակնների տեսակները

Աշակերտը կարողանա զանազանել թվականների տեսակները

Կապն առօրյա կյանքի հետ՝ թվականների տեսակների անվրեպ իմացություն և դրանց կիրառումը գրավոր և բանավոր խոսքում:

Դասավանդման մեթոդները՝ խմբային աշխատանք, ճանաչողական ու կիրառական վարժություններ, հարցուպատասխան, աղյուսակների կառուցում:

Դասի կահավորումը: Գծապատկեր, աղյուսակ:

Դասի ընթացքը.

1. Կազմակերպչական պահ (հաճախումների ստուգում, մատյանի գրանցում):
2. Տնային առաջադրանքների քանակային, ապա որակային ստուգում:
3. Խթանման փուլում առաջարկել նախապես պատրաստված տեքստն ընթերցել՝ առանձնացնելով թվային կարգ արտահայտող բառերը: Հետո մտագրոհ մեթոդի գործադրմամբ բացահայտել դրա արտահայտած իմաստային յուրահատկությունները:
4. Հաջորդաբար ներկայացնել բաշխական, դասական և կոտորակային թվականները՝ տարբերակելով դրանց իմաստային յուրահատկությունները:
5. *Իմաստի ընկալման փուլում* ներկայացնել թվականների տեսակների արտահայտած իմաստը:
6. Կշռադատման փուլում շատ կարևոր է անցած նյութի կրկնությունը և նորի ամրապնդում: Դասագրքում ևս առաջադրանքներն այնպես են տրված, որ անցածի կրկնությունն ապահովվի:

Գրատախտակին կարելի է գծել քառաբաժան աղյուսակ, որի յուրաքանչյուր սյունակը համապատասխանի թվականի մեկ տեսակի կամ ենթատեսակի: Ձևավորվում է աշակերտների 4 խումբ, յուրաքանչյուր խմբից մեկական անդամ մոտենում է գրատախտակին գծված աղյուսակի իր բաժնին, նշում քանակական, դասական, բաշխական, կոտորակային թվականների իմաստները, մյուսը՝ կառուցվածքը, արտահայտման ձևերը, երրորդը՝ շարահյուսական գործառույթը: Ավարտելուց հետո ողջ դասարանով քննարկում են առանձին խմբերի աշխատանքը, ճշգրտվում, անհրաժեշտաբար լրացվում պակասը:

Նույն դասի կետերից մեկն էլ՝ դասական թվականների կազմությունը, կարելի է ծառայեցնել –րորդ և -երորդ ածանցների և դրանցով կազմված դասական թվականների ուղագրության ուսուցմանը:

Գծապատկերները տեսողական հիշողությունն են զարգացնում և այս հարցում արդյունավետ են.





Կարելի է առաջադրել նաև գործնական բնույթի հանձնարարություններ. դրանք կարելի է կատարել և՛ խմբերով, և՛ անհատական, թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքների տեսքով:

Առաջադրանք 1. Գրատախտակը **կարելի** է բաժանել երկու մասի, սյունակներից մեկու գրել բացարձակ թվականներ, մյուսում առաջարկել կազմել և գրել դրանց դասական տարբերակները:

Առաջադրանք 2. Հետևյալ դասական թվականները գրի՛ր հայերեն այբուբենի տառերով, հռոմեական թվանշաններով և բառերով՝ 3-րդ, 4-րդ, 9-րդ, 13-րդ, 41-րդ, 10-րդ, 68-րդ:

Առաջադրանք 3. Կազմի՛ր դասարանի աշակերտների ցուցակը, դասավորի՛ր այբբենական կարգով և հերթականությունը նշանակի՛ր հայերեն տառերով:

Տնային աշխատանք՝ գրել գրույթ «Իմ ամենասիրելի թիվը» վերնագրով:

Աշակերտի ստացած գիտելիքները պիտի կայուն լինեն ու հաստատուն, իսկ դրա համար աշակերտները պետք է լավ ըմբռնեն նոր նյութը, հին ու նոր նյութերը համեմատեն իրար հետ, որոշեն նմանություններն ու տարբերությունները, կատարեն ինքնուրույն վարժություններ, հետևողականորեն կրկնեն անցածը: Ինքնուրույն աշխատանքը աշակերտից պահանջում է մտքի լարում, ստեղծագործական ջանքեր: Այս դեպքում հանդես են գալիս նրա ստեղծագործական միտքն ու կարողությունը:

Եզրակացություն

Նկատի ունենալով թեմայով պայմանավորված լեզվաիմացության նրբությունները՝ մեր հետազոտական աշխատանքը բաժանել ենք երկու մասի՝ առաջին հատվածում քննարկել ենք թվականի՝ իբրև խոսքի մասի ընկալման ու

յուրացման համար առավել արդյունավետ մեթոդները, ապա անդրադարձել ենք թվականի տեսակների ուսուցման հարցին, մանավանդ որ այս պարագայում տարակարծություններ կան:

Ուսումնասիրելով նյութը՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Թվականի՝ իբրև խոսքի մասի ուսուցումը հետապնդում է գործնական նպատակ. աշակերտները նախ պետք է կարողանան լիարժեքորեն ճանաչել այն իբրև խոսքի մաս /թվականի վերաբերյալ նախնական գիտելիքներ աշակերտները ստանում են երրորդ դասարանում/, տարբերակել թվականների տեսակները, դրանց կազմության և գրության սկզբունքները:
2. Լեզվի ուսուցման հիմքում տեսականն ու գործնականը պետք է սերտորեն շաղկապված լինեն այնպես, որ տեսական նյութի յուրացումն անպայմանորեն կատարվի գործնական առաջադրանքների միջոցով: Այդ իսկ պատճառով մեր աշխատանքում կարևորել ենք գործնական առաջադրանքները՝ ընդգծելով դրանց դերն ու նշանակությունը նյութի յուրացման հարցում:
3. Նկատի ունենալով գործնական մեթոդների արդյունավետությունը՝ նպատակահարմար կլինի կիրառել առաջադրանքներ ու վարժություններ, հնարներ, որոնք ավելի դյուրին կդարնեն ուսուցման գործընթացը:
4. Բարձր արդյունավետություն կարող են ապահովում ավանդական և ժամանակակից մեթոդների համադրումը:

Հավելված

1. Գտի՛ր թվականները և պարզի՛ր. թե դրանց հետ գոյականներն ու բայերը ի՞նչ թվով են գործածվում:

1. Գտածոն յոթանասուն միլիոն տարվա հնություն ուներ:
2. Միայն տասը ամիս հետո տուփը կարելի է բացել:
3. Փոքրիկ հովիվը երեսուն – երեսունհինգ գառ էր պահում: Մի օր երեքը գայլի բաժին դարձավ:
4. Հիսուներկու շենքից տասներեքը կառուցվել է:

5. Տասներկու օր մնաց քարանձավում, մինչև որ անձավի մուտքը բացվեց:
6. Միայն մի քաղաքում՝ Բոմբեյում, մարդիկ յոթանասուն լեզվով ու բառբառով են խոսում:

2. Թվականները գտի՛ր և պարզի՛ր, թե դրանց հետ գոյականները ո՞ր դեպքում են հոգնակի թվով գործածվում:

1. Միջոցառմանը հարյուր իննսունվեց երեխա մասնակցեց:
2. Մասնակից հարյուր իննսունվեց երեխանները նույն երգը երգեցին:
3. Երբեմն.սառնամանիքների ժամանակ, երկնքում երկու կամ երեք արև է երևում:
4. Մի անգամ 1868թ. ապրիլի իննին, ուրալյան երկնքում միաժամանակ ութ արև երևաց: Մեկն իսկական էր, մնացած յոթ արևները կեղծ էին:

3.Փակագծում տրված բառերը գրի՛ր կետերի փոխարեն՝ դնելով պահանջված թվով:

Աշխարհում մոտ հազար երեք հարյուր...(ժողովուրդ) կա: Այդ հազարերեք հարյուր... (ժողովուրդ) խոսում են մոտ երեք հազար լեզվով: Կան լեզուներ, որոնցով տարբեր ժողովուրդներ են խոսում: Օրինակ, Անգլիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի քաղաքացիները հիմնականում անգլերեն են խոսում, Լատինական Ամերիկայի բնակչության մեծ մասը, բացառությամբ բրազիլացիների, իսպաներեն է խոսում: Սակայն ավելի հաճախ հակառակն է լինում, մի երկրի ժողովուրդը մի քանի...(լեզու) է խոսում: Սուդանում, օրինակ, հարյուր տասնյոթ լեզու...(գործածվել): Կոնգոյում հինգ հարյուր...(լեզու) կա: Դաղստանում մոտ մեկ միլիոն մարդ...(բնակվել), և այդտեղի մեկ միլիոն բնակիչները... (խոսել) ավելի քան վաթսուն լեզվով:

4.Փակագծում տրված բառերը գրի՛ր կետերի փոխարեն՝ դնելով պահանջված թվով:

1940 թվականից ԱՄՆ-ում գրանցվել է հազար ութ հարյուր քսանչորս...(հրդեհ): Ամեն տարի կրակը ոչնչացնում է իննից տասը միլիոն...(հեկտար)...(անտառ): Մեկ տարում այրված փայտանյութի արժեքը կազմում է համարյա հիսուն միլիոն...(դոլար): Աշխարի ամենամեծ պատկերասրահը Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժն է: Այնտեղ արվեստի ավելի քան երեք միլիոն...(ստեղծագործություն) ...(ցուցադրել): Այդ թանգարանի բոլոր երեքհարյու քսաներկու...(դահլիճ) հայելու համար մարդ շուրջ քսանհինգ...(կիլոմետր) ճամապարհ է անցնում:

5.Փակագծում տրված բառերը գրի՛ր կետերի փոխարեն՝ դնելով պահանջված թվով:

Այն ժամանակ Լեհաստանում...(ապրիլ) հարյուր տասնինը վայրի ...(ցուլ) … (որ) չորս ... (պահվել) փորձատեսությունում, յոթը՝ կենդանաբանական այգիներում, իսկ հարյուր ութ ...(ցուլ) կա՛մ արգելանոցներում … (ապրել), կա՛մ ազատ ... (արածել)՝ որտեղ որ պատահեր, բայց և անտառային նախարարության մշտական հսկողության տակ (եմ):

Իսկ առաջներում, երբ անտառի թավուտներում... (արածել) ավելի քան հազար հինգ հարյուր ...(ցուլ), ոչ մեկը չէր հետևում նրանց:

Միայն Ուզանդայի Մյավա թերակղզում իննսուն... (գետաձի) ավելի քան հարյուր խոտաճարակ խոշոր (կենդանի) են ապրում:

6.Գտի՛ր նախադասությունների արտահայտած մտքերի տարբերությունները՝ ուշադրություն դարձնելով թվականներին:

Ա. Բոլոր դասարաններում քսանհինգ աշակերտ կա: Բ. Բոլոր դասարաններում քսանհինգ-քսանհինգ աշակերտ կա:

Ա. Շրջանի գյուղերում երկու դպրոց կա: Բ. Շրջանի գյուղերում երկուական դպրոց կա:

Ա. Թռչունները չորս փետուր գցեցին ու անցան: Բ. Թռչունները չորսական փետուր գցեցին ու անցան:

Ա. Ընկերներս ամրոցում մի տուն ունեն: Բ. Ընկերներս ամրոցում մի -մի տուն ունեն:

7. Տրված թվականների հոմանիշ ձևերը կազմի՛ր: Տրված և ստացված բոլոր թվականները անվանի՛ր մեկ բառով:

Օրինակ՝ հարյուրական-հարյուր-հարյուր:

Տասական, տասներկու-տասներկու, հազար- հազար, քսանհինգական, վեց*ական:*

8. Նախադասությունները համեմատի՛ր: Տարբերությունները գտի՛ր ուշադրություն դարձրու թվականներին:

Ա. Ամեն մեկը երկու հաղթանակ շահեց: Բ. Բոլորը երկուական հաղթանակ շահեցին:

Ա. Հաղթողներից յուրաքանչյուրին մի գիրք նվիրեցին: Բ. Հաղթողներին մի-մի գիրք նվիրեցին: Ա. Ռոբոտներից յուրաքանչյուրը քսան հրահանգի էր ենթարկվում:

Բ.Ռոբոտները քսանական հրահանգի էին ենթարկվում:

Ա. Ամեն մի թզուկը հինգ խնդիր առաջարկեց: Բ. Թզուկները հինգական խնդիր առաջարկեցին:

Ա. Ամեն անկյունում յո՛թ քար շարիր: Բ. Անկյուններում քարերը յոթ-յո՛թ շարիր:

9. Բառի կրկնությամբ կամ **ական** ***ածանցով նոր թվականներ ստացի՛ր տրվածներից: Փորձի՛ր բացատրել , թե ստացված բոլոր թվականներն ինչո՛ւ են կոչվում*** **բաշխական*:***

Քառասուն, յոթանասուն, ութսուն, տասնութ, երկու հարյուր:

10. **Արտագրի՛ր բացարձակ թվականները՝ գրելով բառերով: 2. Հատուկ անունները գրի՛ր մեծատառով:**

Ըստ հերոդոտի՝ մ. թ. ա. 610 թ. փյունիկյան ծովագնացները տեսել են բարեհուսո հրվանդանը, իսկ մ. թ. 921 թ. ջենովացի վիվալդի եղբայրները մոտեցել են նրան: Բայց այն հայտնաբերեց բարդուդիմեոս դիասը 1486 թ.: Վասկո դա գաման 1497 թ. նոյեմբերի 20-ին անցավ հրվանդանը: 1497-1648 թթ. պորտուգալացիները և հոլանդացիները գաղութացման անհաջող փորձ կատարեցին: Միայն 1652 թվականին նավատորմի վիրաբույժ ժան-անտոնի վան ռիզբեկը բերդ կառուցեց և քեյփթաուն քաղաքի հիմքը դրեց:

11. Նախադասությունների միտքն արտահայտի՛ր այլ կերպ՝ ընդգծված բառերը փոխարինելով ուրիշներով:

Թանգարանում սրահներից *յուրաքանչյուրում* ցուցադրվող *վաթսուն* առարկա կա:

Դպրոցի *բոլոր* դասարաններում *տասնհինգական* սեղան է դրված:

Ամեն մի երամում *տասնհինգ* կռունկ է:

Այդտեղ *յուրաքանչյուր* գետ *երեք* վտակ ունի:

Շենքերի նկուղները *երկուական* ելք ունեն՝ հիմնական և վթարային:

Տղաներին *հազարական* դրամով պարգևատրեցին:

12.Միալները գտի՛ր և ճշտի՛ր:

ա) Օրվա մեջ քսան սիգարետներ ծխողն ամեն տարի ավելի քան հարյուր տասնյոթ հազար քառակուսի սանտիմետր թուղթ ծուխ ու մոխիր է դարձնում:

Այդքան թուղթը բավական է երեք հարյուր էջեր ունեցող մի գիրք հրատարակելու համար:

բ) Մի անգամ տասնվեց տղա բաժանվեցին երկու խմբի:

Իրար ետևից յութանասունհինգ բառեր թելադրվեց:

Այդ բժիշկի երեսունհինգ վիրահատությունն էլ հաջող են անցել:

Հիսունչորս հոյակապ նկարներով այդ գիրքը շատ հին էր:

Հավաքվածներից ամեն մեկը երեքական լեզու գիտեր:

Ջութակահարներից ամեն մեկը հինգական մեղեդի նվագեց:

Սենյակներում սեղանները շարված էին երեքական-երեքական:

13. Ո՞ր շարքում թվական *չկա:*

ա/ հնգապատիկ, քսաներորդ, կես, միակ

բ/ բյուր, միլիոն, բազում, ոչ մի

գ/ հնգյակ, եռակի, առաջնային, միավոր

դ/ բազմիցս, քառակուսի, որերորդ, տասական

14. Ո՞ր նախադասության մեջ թվական կա:

ա/ Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ քանի՛ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:

բ/ Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:

գ/ Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:

դ/ Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չուներ միայն հինավուրց գմբեթարդ եկեղեցին:

15. Ո՞ր նախադասության մեջ թվական կա:

ա/ Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. զույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:

բ/ Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:

գ/ Դասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդցիները, և՛ հաղթած յոթերորդցիները, բարձր աղաղակեցին:

դ/ Ուսուցչուհին հրահանգեց, որ երկրորդ շարքը պիտի վազի մինչև աղբյուր:

16. Ո՞ր նախադասության մեջ քանակական թվական կա:

ա/ Այդ ժողովից մի քանի օր հետո Նիկողոս աղան զարհուրելի ծաղրուծանակի ենթարկվեց:

բ/ Ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:

գ/ Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:

դ/ Անձրևի տասներորդ օրը գետի ջուրն այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզվի դասագիրք 7-րդ դասարանի համար, Երևան, 2011:
2. Խլղաթյան Ֆ., Խաչատրյան Լ., Հայոց լեզու- 7, Երևան, 2006:
3. Հայոց լեզու, Ուսուցչի ձեռնարկ, 5-9-րդ դասարանների համար, Երևան – 2011:
4. Մարկոսյան Ս., Հայոց լեզու 7, Երևան, 1996:
5. Մարկոսյան Ս., Մայրենի լեզու (գործնական քերականությունVII-VIII դասարանների համար), Երևան, 1995:
6. Տեր-Գրիգորյան, Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, «Լույս»: